ահագին շինութիւն է իւր բոլոր յարմարութիւններով, ճաշարանով, մառանով, փուռով, բաղնիքով և ամբարով. շուտով մի որբանոց ևս կը հաստատուի Կարմիրորի մէջ.

— Լուսաւորչի վանքում ևս (Կարնոյ մօտ) մի որբանոց պիտի հաստատուի.

— Խարբերդի որբանոցի շինութիւնը վերջացել է, այդտեղ կարող են ապաստանել 50 որբեր.

— Տիարպէքիրում բացուելիք որբանոցի մէջ առ այժմ պիտի խնամուին 25 որբեր. Որբանոցը պէտք է պահպանուի Պատրիարքից ուղարկած 10 ոսկով և տեղական միջոցներով.

— Թօփխանէի կայսերական նպաստամատոյց յանձնաժողովի կողմից Սեպուհ էֆ. Տէմիրճիպաշեան Սրբազան Պատրիարքին 22,500 ր. յանձնեց ի նպաստ կարօտեալների.

— Բիթլիսից 5 որբեր ուղարկուել են Կ. Պոլիս.

— Պաղտատի հայերը որդեգրելու համար Տիարպէքիրի առաջնորդարանից որբեր են ուղել. արժ. Տ. Եղեկիել Վ.-ը ուղարկել է 5—10 տարեկան 8 աղջիկ և 3 տղայ.

— Կ. Պոլսից Ադրիանուպոլսոյ որբանոցը ուղարկուեցան 20 որբեր.

ԳԱՒԱՌԱԿԱՆ. — Ս. Պատրիարքին և Կրօնական ժողովին այժմ ամենից աւելի զբաղեցնում են առաջնորդական և յաջորդական խնդիրներ. Մի քանի սրբազաններ և վարդապետներ յանձն չեն առել այլ և այլ թեմեր և վիճակներ երթալ. Նորին Ամենապատուութիւնը իւր նորընծայ սաներին է ուղարկում անպաշտպան հօտի բաղմապիսի կարիքները հոգալու, այսպիսի աղէտալի ժամանակներում. Մեր հոգևոր հարց այդ անտարբերութիւնը՝ մեր կարծիքով աւելի քան դատապարտելի է. Ս. Պատրիարք Հօր ջանքով շատ վանքեր վերստին շէնանում են և սկսում իրենց պատմական դերը, ապաստան տալով և խնամելով որբերին և հոգալով նոցա նիւթական և բարոյական զարգացման մասին.

— Ճանիկի միաբէսարիփութեան մէջ մի նոր առաջնորդութիւն հաստատուեց.

— Վարագայ վանքի վանահայր Տ. Ստեփ. Ծ. Վ. Աղաջադեան Վանի առաջնորդական տեղապահ է ընտրուած. Նախկին Առաջն. տեղապահ Տ. Արսէն Վ. վերադարձել է Աղթամար, կաթողիկոսական տեղապահութեան պաշտօնը շարունակելու.

— Աշաշկերտի և Պայազիտի տեղապահ Մամբրէ Վ. մեկնել է իւր պաշտօնատեղին.

— Դերձակեան Տ. Եղիա Ծ. Վ. մեկնեց Պաղտատիա.

— Աղթամարի Կաթողիկոսի 1250 ր. դրամը չգիտենք ի՞նչու են պահում. Կաթողիկոսի մահուանից յետոյ այդ գումարը գտնուում էր Վանի առաջնորդարանում մի երկաթեայ սնդուկի մէջ, զբաղի բանալին Բագրեւանդի Տ. Սահ. Ծ. Վ.-ի մօտն էր և միւսը Տ. Արսէն Վ.-ի. Ցայտնի է որ այդ գումարը կտակուած է Աղթամարի Ամիրոի ժառանգաւորաց դպրոցի համար.

— Վարագայ խաչի տօնին եկեղեցական փառաւոր հանդէս է կատարուել Վարագում. մեծ բազմութեամբ ուխտաւորներ են եղել, ի թիւս որոց և կար կուսակալի օգնական Հայազգի Յովհաննէս Պէրիտ էֆ.

— Եգիպտոսի առաջնորդական տեղապահ Տ. Ց. Ծ. Վ. Աշոտ՝ խդիվից սիրալիր ընդունելութիւն գտաւ.

ՊԱՏՐԻԱՐՔ.—Պր. Հէր Մերքս, որ Հ. Կտակարանի մասնագէտ քննարան է, ս. Պատրիարք Հօր սովորական զբաղումներից ազատ ժամերին պարապում է նրա հետ ս. գրոց ասորերէն բնագրի և հայերէն թարգմանութեան համեմատութեամբ.

— Հոկտ. 29-ին Պարսից շահի ծննդեան տարեդարձի առթիւ պատրիարքական փոխանորդ Տ. Գաբրիէլ Ծ. վ. Սմբատ Ծ. վ.-ի հետ դեսպանատուն գնալով, ս. Պատրիարքի կողմից շնորհաւորում են Նորին Արեգակնափայլութեան տօնը.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ.—Լոնդոնում գտնուող Հ. Ղևոնդ վ., որ հայ հռոմէական է, Նորից նամակ է գրել ս. Պատրիարք Հօր, թախանձելով որ իրեն մայրենի եկեղեցւոյ ծոցը ընդունի. Նորին բարձր Սրբազնութիւնը խնդրագիրը յանձնել է Կրօնական ժողովին.

— Եդեսիայում գերմանական որբանոցի վարիչները 1,500 ոսկու մի ընդարձակ շէնք են գնել, և անպատսպարան կանանց յատկացրել, ուր նոքա զանազան արհեստներով պիտի զբաղուին.

— Արմաշի դպրեվանքի արեղաները հետևեալ վարդապետական շարադրութիւններն են ներկայացրել ծայրագնութիւն ստանալու առթիւ 1. Տ. Թաթուլ աբ. Դուրեան՝ Յովհ. սարկ.-վարդապետ. 2. Տ. Փառէն աբ. Մելքոնեան՝ Ներսէս Շնորհալի. 3. Տ. Վահրիճ աբ. Շահլամեան՝ Յովհաննէս Երզնկացի. 4. Տ. Թորգոմ աբ.՝ Գրիգոր Մագիստրոս. 5. Տ. Գնել աբ. Գալէմքէրեան՝ Սիւնեաց դպրոցը.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ՔԱՂՈՒԹՔ Ի ԿՈՆԴԱԿԻՑ ՎԵՀԱՓԵՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ Օրհնութեան յանուն տ. Վարվառեայ Քանանեան ի Մոսկվա վասն Նուիրե-

լոյ նորին երկուց արծաթեայ մինեւադործ պրա-
գարարձ անօթս և ձեռագործ ոսկեթել պատ-
կերս Ս. Կաթուղիկէ Էջմիածնի. թ. 1080։

— Ցանուն Սինօդի, որով պատուիրի
ներել գատապարտեալ քահանայից Նուխուոյ
վիճակի. թ. 1095։

— Ցանուն Տ. Յովհան քահանայի Ման-
դակունւոյ ի Սուչավայ ի խրախոյս վասն երկա-
սիրութեանն նորին աղօթագրոյ ի Հայ և ի
Ռուսման լեզուս. թ. 1105։

—Ցանուն Հոգ. Կառավարութեան Ակէ-
սանդրապօլու վասն արդեանց մոմավաճառու-
թեան թ. 1151։

— Ցանուն Սինօդի, որով պատուիրի գրել
ի հաշիւ ել և մուրց զ400 ռուբլիսն զընկալեալսն
ի կառավարչէն կալուածոց Տփխեաց վասն
գնելի իրաց ի պէտս երկրաբան հիւրոց թ. 1153։

— Օրհնութեան յանուն պ. Ռստակայ
Միրզա—Աւագեան վասն նուիրեալ հին գրա-
մոց Թանդարանի Մայր Աթոռոյս. թ. 1181։

— Ցանուն Հոգ. Կառավարութեան Տա-
թեւու վասն Դաւիթ աբեղայի Բիւլբիւլեան,
որով կարդի միաբան ս. Ասատուածածին Անա-
պատին Տաթեւու թ. 1182։

— Ցանուն Սինօդի, որով թոյլատրի տպա-
գրութիւն Օրացուցի «Արօր» տպարանին. թ.
1183։

— Ցանուն Առաջն. Տեղապահի հին Բա-
յազիդ քաղաքի Ներսէս քահանայի Քաջբե-
ռունւոյ, որով շնորհի նմա լանջխաչ քահանա-
յական. թ. 1184։

— Ցանուն ժողովրդեան Ասպահանու և
Նոր—Ջուղայի վասն Առաջնորդական խնդրոյ.
թ. 1204։

— Ցանուն Տ. Թորոս քահանայի Ման-
չէսթր քաղաքի. վասն ի նորոյ հրատարակու-
թեան Ենկեղեցի Հայաստանեայց. հանդիսի.
թ. 1233։

— Օրհնութեան յանուն պ. բժիշկ Ռո-
մանոսի Միշվելեան վասն նուիրաբերութեան
նորին. թ. 1234։

— Օրհնութեան յանուն պ. Մինասայ
Պապով ի Մոսկուայ վասն նուիրաբերութեան.
թ. 1235։

— Օրհնութեան և գոհունակութեան
յանուն Մանուկ ազգի Կարապետեան Տէրիմ-
Օղլուեանց վասն հրատարակելոյ նորա ծախիւք
իւրովք զքարոզ գրեանս ի Տպարանի Մայր
Աթոռոյ թ. 1242։

— Ցանուն Թեմակ. Շամախւոյ Դեր. Տ.
Կարապետ Եպիսկ. Այվազեանց որով թոյլատրի
տալ զմասնաւոր չորս ասպիճան վարդապետա-
կան վանահօր վանուց Սաղեանի Տ. Սահակ
Աբեղայի. թ. 1547

— Ցանուն Դեր. Տ. Սուքիաս Արքեպիսկ.
որով յանձնարարի նմա վերածել յասպիճան
կուսակրօն քահանայութեան և աբեղայու-
թեան զերկոսին աւագ սարկաւագունս Մայր
Աթոռոյ զԴաւեղին և զՂուկաս. որպէս և
յասպիճան սարկաւագութեան զերկոսին
ուրարակիր դպիրս զՊօղոսն Զուբարեան և
զՀմայեակն Նաղճեան ի միաբան Մայր Աթոռոյ.
յասպիճան քահանայութեան զՀնդեսին ընտ-
ծայացուս գիւղօրէից թեմին Երևանայ։
թ. 1274։

— Ցանուն Այրի Տիկին Մարիամու
Կրեւեան Պոպովեանց յՕդեսսայ քաղաքէ, ո-
րով օրհնի ցանկալի մատաւորութիւն նորին
վասն կտակին, զոր ունի յաւելուլ ի վերայ
կտակի հանգուցեալ առն իւրոյ Գրիգորի Պո-
պովեանց։ թ. 1276։

— Օրհնութեան և գոհունակութեան
յանուն Տ. Գրիգոր աւագ քահանայի Խորա-
սանճեան վասն մատուցեալ ծառայութեան
նորին և աղքատաց Ջանիցն. թ. 1277։

ԴԻՒԱՆ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Հայրապետական Դիւանի Գործոց Կառա-
վարիչ և Վեհ. Հայրապետի գաւազանակիր
Նշանակուեց Տ. Կորիւն վարդապետ, որ ցարդ
կատարում էր Դիւանագրի պաշտօնը։

Հաստատեմ Ս. Պետերբուրգ, յ12 օգոստոսի 1897 ամի
Ի տեղի Նախարարին Ներքին Գործոց. Օգնական Նախարարի. Անդամ՝ Ծերակուտի
ԻԿՍԿԻՒԼ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցական Հոգաբարձութեան աղքատ ծխականաց Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Օդեսսա քաղաքի:

1.

Վասն խնամարկութեան աղքատ ծխականաց ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Հայոց Օդեսսա քաղաքի հաստատի եկեղեցական հոգաբարձութիւն առ յիշեալ եկեղեցեաւ:

2.

Հոգաբարձութիւնն բաղկանայ յեօթնից անդամոց՝ ի հնգից ընտրելոց եռամեայ ժամանակաւ յընդհանուր ժողովոյ ծխականաց յիշեալ եկեղեցւոյն, յերեցփոխանէ վերջնոյս և ի միոյ ի սրբազնագործ պաշտօնէից նորին նշանակելոյ ի վիճակաւոր Առաջնորդէ.

Ծանօթ. Վասն անձանց, որք ունին զիրաւունս մասնակցելոյ յընդհանուր ժողովս ծխականաց, հոգաբարձութիւնն պարտ է կազմել և ի կարգաւորութեան պահպանել ցուցակ հաստատեալ ի վիճակաւոր Առաջնորդէ: Ի սկզբան՝ ցկազմութիւն հոգաբարձութեան, ցուցակն այն կազմի ի կարգեալ յայս սակս ի վիճակաւոր Առաջնորդէն Յանձնաժողովոյ բաղկացելոյ յաւագ քահանայէ եկեղեցւոյն և ի տասանց պատուաւոր ծխականաց:

3.

Անձինք ընտրեալք յանդամութիւն հոգաբարձութեան հաստատին ի վիճակաւոր Առաջնորդէն:

4.

Անդամք հոգաբարձութեան ընտրեն ի միջոյ իւրեանց նախագահ. ի բացակայել նորին նախագահէ ի հոգաբարձութեան սրբազնագործ պաշտօնեայ անդամակիցն:

5.

Խնդիրք առաջարկեալք ի քննութիւն հոգաբարձութեան վճռին բազմութեամբ ձայնից. իսկ ի դէպս հաւասար բաժանման ձայնից, ձայնն նախագահի տայ գերակշռութիւն: Ժամանակ նստից հոգաբարձութեան, զկարգ պարապմանց նոցին, զբաժանումն պարտաւորութեանց ի մէջ անդամոց և այլն որոշէ ինքնին հոգաբարձութիւնն՝ հաստատութեամբ վիճակաւոր Առաջնորդի:

6.

Հոգաբարձութիւնն պարտ է ունիլ հոգս՝ յաղագս մատակարարելոյ աղքատ ծխականաց յիշեալ եկեղեցւոյ զհնարաւոր նպաստս ի կարեւոր դէպս, յաղագս գտանելոյ զմիջոցս բանալոյ առ եկեղեցեաւն զդպրոցս, զանկելանոցս և զայլ Աստուածահաճոյ հաստատութիւնս, եւս և յաղագս կարգաւորելոյ զհաստատութիւնս զայսոսիկ, նախապէս խնդրելով առ այն զթոյլտուութիւն քաղաքական իշխանութեան ըստ սահմանեալ եղանակին:

7.

Աղբիւրք դրամական և առ հասարակ նիւթական միջոցաց վասն հոգաբարձութեան են. 1) Դրամագլուխք, որք զարդիս կան վասն օժանդակութեան աղքատ ծխականաց յիշեալ եկեղեցւոյ. 2) Գումարք և կայք, որք կտակօք յատկանան բարեգործական նպատակս և 3) Կամաւոր նուէրք: Նուէրք այսոքիկ ժողովին կամ ի յատկացեալ առ այս գանձանակս կամ առանձին հանգանակութեամբ. զգանձանակն մարթ է շրջեցուցանել նաև յեկեղեցւոջ: Վասն ժողովելոյ զնուէրս ի մէջ անձանց ի Հայոց դաւանութենէ, արտաքոյ Օդեսսա քաղաքի ի թեմին՝ վիճակաւոր Առաջնորդն կարէ տալ զտումարս հանգանակութեան:

8.

Ամենայն շարժական և անշարժ կայք, որք գտանին ընդ տեսչութեամբ հոգաբարձութեան, ենթարկին օրինօք սահմանեալ կանոնաց՝ վասն ստանալոյ, օտարացուցանելոյ,

պահպանելոյ և դատաստանական պաշտպանութեան եկեղեցական կալուածոց։

9.

Հոգաբարձութիւնն վայելէ զհովանաւորութիւն հոգևոր և քաղաքական իշխանութեանց ընդ հսկողութեամբ որոց գտանի։ Կատարելով զպարտիս իւր, հոգաբարձութիւնն վարեսցէ զգործս իւր անհրաժեշտ յայտարարութեամբ, ի գիտութիւն հասարակութեան, խուսափելով յամենայն ձևականութենէ։ Ի վերջ տարւոյն հոգաբարձութիւնն յաղագս գործունէութեան իւրոյ և գումարաց և գոյից եղելոց ընդ տեսչութեամբ իւրով համարս տայ ընդհանուր ժողովոյ ծխականաց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն Հայոց Օդեսսա քաղաքի, որք ի միջոյ իւրեանց ընտրեսցեն զհնգեսին անձինս վասն ստուգութեան հաշուոց. հաստատեալ ի ժողովոյ հաշիւն առաջի անկի վիճակաւոր Առաջնորդին, Քաղաքապետին Օդեսսայի և Նախարարութեան Ներքին Գործոց։ Յիշեալ հաշիւն տպագրի յընդհանուր գիտութիւն ի լեզուս Ռուսաց և Հայոց, պահպանութեամբ ընդհանուր կանոնաց գրաքննութեան։

10.

Ժամանակ և տեղի ընդհանուր ժողովոյ որոշին յիւրաքանչիւր ամի ի վիճակաւոր Առաջնորդէն, ըստ կարգադրութեան որոյ յայտարարի զայսմանէ ի յիշեալ եկեղեցւոջ ի նախընթաց յերիս կիւրակէս կամ ի տօն աւուրս առաջ քան զժողովն։

11.

Ժողովն ծխականաց համարի կանոնաւոր, եթէ յայնժամ եղեալ է ոչ պակաս քան զմիտասներորդն թուոյ անձանց, որք ունին իրաւունս մասնակցելոյ ի նմին. մէն մի անդամ որ մասնակցի ժողովոյն, ունի մի ձայն. գործք ի ժողովի վճռին առաւելութեամբ ձայնից և վասն կայացեալ վճռոյ կազմի արձանագրութիւն։

12.

Զգործոց, որք ի վեր են քան զիրաւունս հոգաբարձութեան և ընդհանուր ժողովոյ ծխականաց, եւս և զկասկածելի դիպաց, հոգաբարձութիւնն առաջի անէ վիճակաւոր Առաջնորդին ի լուծումն կամ ի բանակցութիւն ընդ որում անկէ։

Վերատեսուչ Դեպարտամենտին Հոգևոր Գործոց Օտար Դաւանութեանց

ՄՈՍԱԼՈՎ.

Ի տեղի Մեծաւորի Բաժնի

ԳԻՋԷՆ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. Մեղքի խնկական նշանակութիւնը . . 467
2. Աղեքսանդր Վինէի մտքերը . . . 469
3. Քրիստոսի չարչարանքները Օբեր Ամմերգաուի մէջ: . . . . Ս. Մ. . 470
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . 481

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. Գրախօսութիւն 489
6. Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը Մ. Աբեղեան (Շարունակութիւն եւ վերջ) . 494
7. Հ. Գելցեր. Համառօտութիւն Բիւզանդական Կայսրնե-րի պատմութեան (թարգմ.) Մ. Վ. (Շարունակելի) 503

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

8. Թէ ինչպէս պէտք է ուսումը հետաքրքրական անել . . (Թարգմ.) Գ. Ղ. . 509
9. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ. 517

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

10. ՄԱՅՐ ԱԹՈՌ. 519
ՊԱՐՍԿԱՀԱՅՔ 523
ՏԱՃԿԱՀԱՅՔ 525
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. 527
Յաւելուած. 531
Ցանկ նիւթոց
Մատենախօսութիւն
Յայտարարութիւններ.